Արձանագրություն N 3
«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար « ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԼՎԱՑՔ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան «29» դեկտեմբերի 2021թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ռուբեն Սիմոնյան
Հանձնաժողովի բացող անդամներ՝
Հասմիկ Մանուկյանը
Լուսինե Բաղդասարյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝
Գևորգ Առաքելյանը
Միեր Մկրտչյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Էլինա Պողոսյան

Օրակարգ

1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
2. Հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Է. Պողոսյան)

1.1. Հաշվի առնելով, որ գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ բավարար գնահատված բոլոր մասնակիցները 28.12.2021թ. ժամը 11:00-ին հրավիրվել էին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի, 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:

Սակայն բանակցություններին մասնակցեցին «Սիլվեռ Գլաս» ՍՊԸ և «Ռուզաննա Թորոսյան» ԱՁ ընկերությունները և ստորև ներկայացված չափաբաժինների գնային առաջարկները նվազեցվեցին՝ սահմանելով նոր գներ.

Չ/հ	Գնման առարկա	Բանակցություններին մասնակցող կազմակերպությունների				
		Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ/ՀՀ դրամ/		
				Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1 2	Լվացքի և չոր մաքրման ծառայություն	1	«Սիլվեռ Գլաս» ՍՊԸ	7 200 000	-	7 200 000
		2	Ռուզաննա Թորոսյան ԱՁ	7 900 000	-	7 900 000
		3	«Սելենա Սերվիս» ՍՊԸ	10 000 000	2 000 000	12 000 000
		4	«Արեգ-Արիան» ՍՊԸ	15 000 000	-	15 000 000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Է. Պողոսյան)

2.1 28.12.2021թ.-ին հայտերի գնահատման նիստի ավարտի օրը, armeps (www.armeps.am) էլեկտրոնային գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԼՎԱՑՔ-22/03» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված, հայտ ներկայացրած՝

- «Սիլվեռ Գլաս» ՍՊԸ -ին 1 չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից,

2.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել՝ «ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԼՎԱՑՔ-22/03» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

2.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սամանել 5 օրացուցային օր:

2.4 Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակիցներին ծանուցել պայմանագրերի նախագծերը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել կից գրությամբ պայմանագրի նախագիծը երկու օրինակից, ինչպես նաև որակավորման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր), պայմանագրի կատարման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Է. Պողոսյան)

3.1 «ԻՀԱԿ-ԳՀԾՁԲ-ԼՎԱՑՔ-22/03» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Աճառյան 2, 212 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ռ. Սիմոնյան

Անդամներ՝ _____ Գ.Առաքելյան

_____ Մ. Մկրտչյան

_____ Հ.Մանուկյան

_____ Լ.Բաղդասարյան

Քարտուղար՝ _____ Է.Պողոսյան